

# ԹՈՄԱՍ ՀԱՐՏՄԱՆ

ԵՒ

## ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ



Ամէն Հայ, որ գեղարուեստի՝ մանաւանդ երաժշտութեան՝ հետաքրքրուող է, պիտի չնորհակալութեամբ յիշէ անունը ոռու ականաւոր երգահան թումաս Ալեքսանդրովիչ Հարտմանի, որին երկու յօդուածները եւ դասախոսութիւնը թարգմանել եմ ոռուերէն լեզուից եւ որին հեղինակաւոր կարծիքը, հիացմունքով լիդէպի հայ ժողովրդական երաժշտութիւնը, ուրախութիւն պիտի պատճառէ ամէն մի Հայի:

Ահա մի քանի տող նուիրում եմ նրա գեղարևստական գործունէութեան, որ աւելի եւս գընահատելի է դարձնում նրա զրուածքները. թումաս Ալեքսանդրովիչ Հարտմանը, երգահան, կոնսերվատորի պրօֆեսօր, Անդամ Ռուսական նախկին կայսերական երաժշտական ընկերութեան, նշանաւոր Արենսկու եւ Տանէնվի աշակերտն է եղած: Ռւնի բազմաթիւ զրուածքներ օրկեստրի, դաշնամուրի եւ ձայնի համար յօրինուած: Մատնանիշ անենք բալէ «Կարմիր ծաղկեկը» (Պետրովբադ եւ Մոսկուաներկայացուած կայսերական թատրոններում), օպերա՝ «Խանջուկների թատրոնին» համար (marionnet es). Danses plastiques պարի պօէմ, որ աշխատասիրութ էր յայտնի Միշէլ Ֆոկինի հետ Միւնիսէնի թատրոնին համար, շատ յօրինուածքներ դրամաների համար, «Կալիպուլա», «Կեանքի ճիրաններին մէջ» եւն. եւն.:

Գերջին տարիներս Փարիզ ապրելով նա առաջնակարգ Փիլմեր յօրինած է, որ մէծ յաջո-

դութիւն գտած են եւ Փարիզի յայտնի քննադատ Վիւիէրմողը եւ ուրիշները համարում են, որ նա նոր քայլ է առած սինեմայի արուեստի մէջ:

1919 թ.ին երբ յեղափոխութիւնը նրան ձգած էր Թիֆլիս, նա առիթ ունեցաւ ծանօթանալու Կոմիտասի երկերի հետ եւ խորապէս գընահատեց նոցա — ապացոյցը ընթերցողը կըդանէ յօդուածներին մէջ: Նրան յաջողուեց Կոմիտասի բարեկամներին հետ, — նկարիչ Եղիշէ Թաթէոսեան, Սպիրիդօն Մելիքեան, Պրօֆեսօր Զավրիեան եւ իր ամուսինը, եւ ուրիշներ — երկու նուազահանդէս կաղմակերպել իր դասախոսութիւններով միասին: Այդ նուազահանդէսները կրկնուեցան երեւան եւ Բաթում Պ. Խատիսեանի եւ Բաթումի հայ հիւպատոսի հովանաւորութեամբ: Որովհետեւ անկարելի եղաւ Սպիրիդօն Մելիքեանի հրաշալի խումբը տանիլ երեւան ու Բաթում, տիկին Հարտմանը, որ չափազանց գեղեցիկ սովորանո ունեցող երգչունչի է, սովորեց Կոմիտաս Վարդապետի երգերը հայերէն՝ զարմացնելով եւ հիացնելով ունկընդիրներին:

Ընթերցողին համար պարզ պիտի լինի, թէինչո՞ւ Պ. Հարտմանի յօդուածները եւ դասախոսութիւնը, որ 14 տարի առաջ զրուած ու տեղի են ունեցած, արժանի էին հայերէն թարգմանուելու եւ տեղ զրաւելու մեր երաժշտական գըրականութեան մէջ:

ՄԱՐԳԱՐԻՏ ԲԱԲԱՅԵԱՆ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՍԻՆ  
ԿԱՐԴԱՑՈՒԱԾ ԹԻՖԼԻԶՈՒՄ 1919 ԹՈՒԻՆ

Առաջին խօսքերս կոմիտասի մասին չքմեղանքի բառեր պիտի լինեն: Մեծ ամօթով խօստովանում եմ, երբ՝ երեք ամիս առաջ ևս Թիֆլիզ հասայ, ոչ միայն ծանօթ չէի նրա երկերի հետ, այլ նրա գոյութեան մասին գաղափար նոյն իսկ չունէի: Պետրոկրագ եւ Մոսկուա նրա երկերը երբեք չէին կատարած, մայրաքաղաքների լրագրութեան մէջ նրա մասին երբէք գրուած չէր թէ ի՞նչ երգահան եւ ի՞նչ արտակարգ յայտնութիւն էր նա: Բայց մայրաքաղաքների յետադիմութիւնը վաղուց յայտնի է: Թիֆլիզում աւելի լաւ չէր. երբ ուղեցի գտնել նրա երկերը, ոչ մի երաժշտական խանութում հնարաւոր չեղաւ նոցա զնել: Ճշմարիտ է, նրա հեղինակութիւնները տպուել են արտասահմանում, բայց Եթէ պահանջ լինէր, նրանց կարելի էր վերահըրատարակել Թիֆլիզում: Պահանջ չկար: Այդ բանի մէջ չի կարելի մեղագրել Թիֆլիզի հասարակութիւնը: Նրա աչքում կոմիտասը մինչեւ հիմայ մնացել է երաժշտական գիտում, ազգագրագէտ, շատ յարգելի ու պատուելի գործիչ: Բայց — երաժշտական դիտական աշխատութիւնների պահանջը շատ քիչ է եւ հետաքրքրութները սակաւաթիւ են: Այդ ձեւով ներկայացուած է (1) Ռուբախութեամբ կը երատարակենիք քարզմանութիւնը Պ. Թ. Հարտմանի դասախոսութեան որ օտար հեղինակաւոր երաժշտագէտներու կողմէ կոմիտաս Լարդապետի գործին ամենէն արժէ քայլուր զնահատութենքին մին է: Մեր յաջորդ քիւով պիտի երատարակենիք երկու յօդուածներուն քարզմանութիւնը, զոր Աննա Տիգիսի համար համեցաւ կատարել օր. Մարգարիտ Բարյեան:

ցուած նրա աշխատութիւնները անծանօթ մը-նացել էին հասարակութեանը: Այս օրուան երգահանդէս - դասախոսութեան նպատակներից մինն է կոմիտասին ներկայացնել ոչ միայն իրբեւ մի օժտուած երաժիշտ, այլ մի երգահան, որ քանքարի գրումն է կրում եւ որի անունը ոսկի տառերով կ'արձանագրուի հայ երաժշտութեան պատմութեան էջերին մէջ: — Ես հաւատում եմ Հայ երաժշտութեան ապագային, որովհետեւ մի ազգ, որ ստեղծած է հայ երգը, մի ժողովուրդ որի ձեռքն է եղած Պարսկաստանի երաժշտական կեանքը (յայտնի է, որ պարսիկ երաժշտների մեծամասնութիւնը Հայեր են եղած) — մի ժողովուրդ, որ երաժշտական անցեալ է ունեցած, ապագայում աշխարհին պիտի ընծայէ մի շարք մեծ անուններ: Այդ անունների մէջ առաջինը կը լինի անշուշտ կոմիտաս Վարդապետի անունը: Յիշում եմ Պ. Չերեպնինի հիացմունքը՝ զննելիս նրա երկը, նրա բացագանչութիւնը՝ « ինչպէս պիտի ուրախանար Մորիս Բավելլը \*\*), լսելով այս երկերը » :

Կարծես ի պատասխան այս բացագանչութեան եւ յօդուածներիս հրատարակելուց յետոյ, ևս նամակ ստացայ բժշկապետ Առաքել Օհանեանցից, որ մինչեւ պատերազմը Փարիզ էր ապրած: Այդ նամակին մէջ նա նկարագրում է Փրանսական երաժշտական աշխարհի ամենամեծ ներկայացուցիչների վերաբերմունքը դէպի

\*) Յայտնի ոռու երգահան եւ Թիֆլիզի երաժշտական դպրոցի տեսուչ:

\*\*) Մեծայայտնի ժամանակակից ֆրանսացի երգահան: Ա.Բ.

Կոմիտասը : Նրա նամակը լեցուն է խոր ակնածութեամբ եւ երկիւղածութեամբ դէպի կոմիտասը եւ ևս կը ներկայացնեմ ձեզի նրան ամբողջովին, երբ խօսելու լինեմ Արեւմուտքի վերաբերութեան մասին դէպի մեր վարպետը : Այժմ Պ. Մատենջեանը կը ներկայացնէ ձեզ համառօտ նրա կենսագրութիւնը, բնոյթը . յետոյ ես նւազործութեան ամբողջութիւնը կը ներկայացնեմ ձեզ :

Անցողաբար հետեւեալ փաստը :

Եյմենից առաջ նրա մէջ տեսնում ենք ամենաեռանդուն երաժշտական ազգագրագիտին, որ չնայած աղքատիկ միջոցների, առանց ո եւ է օգնութեան կամ կազմակերպուած յանձնաժողովների աշակցութեան, հնար գտաւ մինչեւ 3000 երդ գրի առնել :

Երկրորդ՝ դա բարձր երաժշտական գիտնական է, հեղինակ մեծ աշխատութեան « Հայկական Երաժշտական Պատմութիւնը », հին խաղերի բանալին գտնողը, որ կատարեալ երաժշտական գիւտ է : Աւելորդ չպիտի լինի յիշել, որ Արեւմուտքի խաղերը մինչեւ այժմ գիտնականների վիճարանութիւնների խնդիր են, եւ կոմիտասի գիւտը այդ հարցում պարզապէս մի յայտնութիւն է :

Երրորդ — նա ամենաեռանդուն երաժշտական գործիչ է եւ իր անխոնջ քարոզութեամբ, երդով, խօսքով, եւ նուազով նա խկական հայերդը ներկայացնում է թէ՛ իր ազգին եւ թէ՛ Արեւմուտքին :

Վերջապէս՝ չորրորդ — նա հեղինակ է հայկական երգերի մշակման երեք բարակ հաւաքածուների եւ ներկայանում է իրբեւ երգահան : Հարց է ծաղում մեր առաջ, թէ այդ գործունէութեան ծանրութեան կեզրոնը ո՞րտեղ է :

Գերազանցօրէն նա գործի՞չ է, աղղաղրազի՞տ, զիտնակա՞ն թէ երգա՞հան : Զնայած, որ կոմիտասը Երեւան է եկած իրբեւ հեղինակ հայկական երգերի մշակումների, ևս պնդում եմ, որ նախ եւ առաջ նա երգահան է : Նրա ճանա-

պարհը միակ ճիշտ ուղին է, որ պիտի ընտրէր այդ մարդը, որ հսկայական նպատակ ունել — գտնել այն ներդաշնակային եւ ձայն առ ձայն ոճը, որ իրենց էութեամբ իսկական հայ ժողովրդական երգին համապատասխան են : Այտեղ մի զիտողութիւն կարելի է անել կոմիտասին : Եթէ նրա նպատակն էր տարածել ժողովրդական երգը, նախ պէտք էր նոցա հրատարակել իրբեւ հում նիւթ, այնպէս ինչպէս երդում է ժողովուրդը, իսկ յետոյ զբաղուել մշակման խնդրով : Ինչո՞ւ նա այդ չարեց : Պարզ է՝ միջոցների պակասութիւնից : Գործնական տեսակէտից — իրբեւ տարածելու միջոց, — աւելի լաւ էր նոցա ճանաչել մշակուած ձեւով : Նա կարող էր աւելի յուսալ ժողովուրդի լայն խաւերը հետաքրքրել այդ ձեւով, քան թէ ժողովրդական երգերի հաւաքածուի ակաղեմիկ հրատարակութեամբ :

Ծնորհիւ կոմիտասի աշակերտ՝ Սպիրիդոն Մելիքեանի եւ Պրօֆեսոր Ա. Տէր-Ղեւոնդեանի, այդպիսի մի զիտնական հաւաքածու լոյս է տեսած : Ծատե՞րը արդեօք ծանօթ են այդ գործին, շատե՞րը թերթած են այդ հատորը մինչեւ վերջը : Նոյն իսկ երաժշտական պատմութեան տեսակէտից կոմիտասը իրաւունք ուներ մշակելու ժողովրդական երգերը եւ այդպիսով հետեւիլ Արեւմուտքի ամենամեծ վարպետներին : Ինչպէս յայտնի է, ժե . և ժԶ . դարում Եւոպայում, մանաւանդ Խոտալիայում եւ Նիսերյանդում ձայն առ ձայն ոճը ամենամեծ զարգացման էր հասած եւ արտայայտում էր խմբական երգերով : Ամենաքանքարաւոր երգահանները իրբեւ հիմք առնում էին ժողովրդական մի երգ եւ նրա հիման վրայ հիւսում էին ձայն առ ձայն երաժշտական պատկերների դժայլի զորդեր : Անցողակի ասենք, որ շատ անդամ մի աշխարհիկ երգ հիմք էր լինում մի պատարագի կառուցման : « Սիրտս ուժզին կը բարախէ », « զինուած մարդ » եղանակները ծառայել են պատարագներու մորիֆներ զրե-

լու։ Հեղինակները փոխում էին երդի չափը և և խիստ կրօնական ոճի շրջանակին էին յարձարեցնում նրա էռութիւնը։

Ուրեմն այդ հեռաւոր դարերին արդէն ժողովրդական երգը զեր է կատարած եւ այդ զարդարը թէեւ ժամանակի երաժշտական ոճին յարմարեցրած, պատճառ եղաւ մի շարք փայլուն հեղինակութիւնների որոնց հեղինակներն եղան Փոսկեն գը Պրէ, Պալեստրինա, Օրլանդո Լասուս։ որոնց անունը աւելի մեծ էր իր ժամանակին, քան մեր օրով Բեթհովէնի եւ Վադների հռչակը։

Նշանաւոր ոուս տեսաբան Տանեեվը անձամբ ինձ ասում էր, թէ այն եղբակացութեան է եկած, որ ոուս ժողովրդական երգերը պէտք է ձայն առ ձայն ոճով մշակել։ Հանճարեղ Կոմիտասը, նախաղղայութեան ոյժով զործադրեց այդ ոճը եւ այնպիսի կատարելութեամբ, որ հազիւ իր արեւմտեան արուեստակիցներից մինը կարողանար իրագործել։ Նրա «մշակումների» (դիտմամբ չակերտների մէջ եմ դնում), աւելի ճիշտ կը լինէր ասել, նրա քանքարաւոր խմբական երկերի մէջ՝ ժողովրդական եղանակը պահուած է անձեռնմխելի՝ թէ՛ չափի, թէ՛ եղանակի տեսակէտից։ Նա Փանատիկոս էր այդ հարցում։ Ո՞վ նրանից լաւ կարող էր պաշտպանել ժողովրդական երգի հոգին։

Նրա խմբական երկերի մէջ տեսնում ենք մի շարք անձնական հայկական եղանակներ, որ հիւսուած են ամբողջութեան հետ։ դոքա ոչ միայն գեղեցիկ են իր եղանակներ, ներդաշնակային նրբութիւններ, այլ իրենց բնաւորութեամբ կատարելապէս հայ երգի հոգւով են ներկայանում եւ շատ անգամ դժուար է զատել իսկականը յօրինուածից։ Դա միայն յօրինուածք չէ, այլ ոնի ստեղծագործութիւն։ Ահա զրանում կայանում է Կոմիտասի գործին մնայուն նշանակութիւնը ոչ միայն հայ, այլ եւ արեւմտեան երաժշտութեան համար։ Նրա խմբական երգերը օրինակելի են։

Դաշնամուրի մշակումների մէջ նրա ներ-

դաշնակային ոճը բնական կերպով կապուած է ժողովրդական երգի հոգու հետ։ Ի՞նչ նրբութիւն, ի՞նչ անուշ բուրմունք։ Զես իմանում թէ ինչո՞վ աւելի հրճուես. ծաղկո՞վ, — ժողովրդական երգով, — թէ այն ծաղկասուն դաշտով, որին վրայ նա բուսել է։ Ահա ինչի հետ կը համեմատէի Կոմիտասի ներդաշնակային ոճը։ Իրեւ օրինակ կը բերեմ այստեղ «Անտունի» անմաման երգը՝ երաժշտական տպաւորականութեան սքանչելի մի գործ։

Պէտք է ասել, որ Կոմիտասի երգերին մէջ նախնականը (պրիմիթիֆ) զարմանալի կերպով հիւսում է ամենանուրբ մանրազնին Գրաֆինէ) ներդաշնակութեան հետ եւ նա միշտ համոզիչ է։ Խելով Կոմիտասի ներդաշնակութիւնները, դուք համոզուած էք, որ նոցա միայն այդ ձեռով կարելի էր ներկայացնել։ Նա համոզում է ձեզ իր տաղանդի մեծ ոյժով։ Դա նրա զործի ամենաքննորոշ գիծն է։

Զպէտք է Ենթադրել, թէ նա միայն այս երեք հաւաքածուն է արտադրել։ Ես արդէն յիշատակել եմ, որ նա համարեա աւարտած է «Անուշ» օպերան։ Նրան Պոլիս այցելողները պատմում են, որ իրենից լսել են մի հրաշագեղ ցայդանուած (նոկտիւրն) կլարինեթի եւ օրկեստրի համար գրուած։ Նրա զործը քննելով այնպիսի տեսական կատարելագործութիւն ենք գտնում, որ համոզուած կարելի է հաստատել, որ դրա հեղինակը շատ է յօրինած իր կեանքում — եթէ այդ երկերը լոյս չեն եկած, աւաղ, դրա պատճառը միջոցներից զուրկ լինելն է։

\*) Բժիշկ Օհանեանցը՝ հմուտ հայերէն եւ օսար լեզուների, անձնուիրաբար օգնում էր Կոմիտաս վարդապետին Փրամներէնի վերածելու նրա մեծարժէք երկու դասախոսութիւնները, որ պիտի ներկայացնէր Համագումարին։ Դոցա յաջողութիւնը անօրինակ էր։ Դժբաղդարար այդ ձեռագիրները անհետացան պատերազմի շրջանին եւ անկարելի եղաւ մինչեւ օրս նոցա գտնել։

Մ.Բ.

Այժմ սկիտի կարդամ ձեզ բժշկապետ Օհաննեանցի նամակը, որ ստացայ յօդուածներիս տպագրութիւնից յետոյ եւ որ պարտք եմ համարում այստեղ յիշատակել : Ահա փաստեր, թէ ի՞նչ վերաբերմունք են ցոյց տուած կջմիածնայ համեստ վանականին արեւմտեան երաժշտական մշակութի ամենամեծ անձերը եւ ի՞նչ տպաւորութիւն էր նա գործած բոլոր ճշմարիտ նրբազգած մարդկանց եւ երաժշտների վրայ :

« Այդ աննման համեստ եւ նուրբ անձի հետ ծանօթացայ Փարիզում 1906թ. եւ հպարտ եմ նրա բարեկամութիւնը վայելած լինելու : Նորից հանդիպեցայ նրան 1914թ., երբ նա եկած էր Փարիզ Համաշխարհային երաժշտական համագումարին մասնակցելու համար \* : Անհունորէն երջանիկ էի համարեա ամէն օր նրան հանդիպելու յայտնի երդչուհի Օր. Մարգարիտ Բարայեանի տանը, որ հայ երաժշտութեան անխոնչ մշակն ու տարածողն է Արեւուտքում : Շնորհիւ Հայր Կոմիտասի, Օր. Մ. Բարայեանի եւ նրա երկու աշակերտների՝ Պ.Պ. Մուղունեանի եւ Շահ-Մուրատեանի՝ հայ երաժշտութիւնը անասելի ընդունելուրիս գտաւ համագումարին : Դրան մեծապէս նպաստեցին Կլոդ Դեբիւսին, մեծայայտնի Բումէն Բոլլանը, անմահ երաժտա - դրական վէպի՝ «Ժան Կրիստոֆ»ի հեղինակը, Լուի Լալուան — մեծարքէք քննադատը եւ Դեմիւսիի կենսագրողը եւ ուրհշ շատ անուանի Փրանսացի երաժիշտներ եւ երաժշտագէտներ \* ) :

« Այս եղաւ 1914թ. յունիս եւ յուլիս ամիսներին : Հայր Կոմիտասը գրաւել էր ամբողջ Համագումարի ուշագրութիւնը իր զասախօսութիւններով հայ երաժտութեան մասին, ներկայացնելով նրա ծագումը, նրա տեսական ձայն առ ձայն ոճի բեզմնաւորումը, որ նա զտած էր հին հայեական նօթագրութեան մէջ, եւ իր երգահանգէտներով :

« Փարիզի ժամանակակից երաժշտական կեանքին մէջ նրա յաջողութիւնը ամենացայ-

տունը եղաւ : Այդ օրերի թերթերը եւ ամսագիրները, թէ՛ Ֆրանսիայի եւ թէ՛ օտար երկիրների, վկայ են նրա աննախընթաց յաջողութիւններին :

« Համեստ Կոմիտաս Վարդապետը հրճւում էր ոչ այնքան իր յաջողութեան, այլ Հայ երաժշտութեան վառարանութեան համար : Նա խորին գոհունակութեամբ տեսնում էր, որ իր տոհմիկ երաժշտութիւնը՝ իր նուիրական երջանկութիւնը, ամբողջ Համագումարի համակրութիւնը եւ սէրը զարթեցրել էր : Այդ յաջողութիւնների օրերին՝ իր սիրած մօտ բարեկամների շրջանակում մասնակից էր անում նոցա իր նուիրական երազներին : Նա մեծ յոյս ունէր, որ Համագումարի այդ յաջողութիւնները աչքը բանան մի շարք մարդոց, որ կարող էին նպաստել իր երազի իրականացման — Պոլսում Հայեական երաժշտանոց (Կաներվասորիա) բանալու զործում : Նա երազում էր աշակերտների մի շարք պատրաստել, որոնք կարողանային նրա գործը շարունակել եւ որոնց նակարող էր մատակարարել իր զիտութեան պաշտը ու փորձառութիւնը ժողովրդական երաժշտութեան ապագայ զարդացման զործում :»

Ես ինք մասնաւոր ուրախութեամբ եւ գոհունակութեամբ ողջունում եմ այդ երազը եւ հոգուս ամբողջ յոյսով հաւատում եմ նրա իրագործման : Այդ երազին մէջ ես դանում եմ ոչ

\* ) Բացի այդ դասախոսութիւններից, որտեղ Կոմիտասը երեւան եկաւ իրեւ դասախոս, երգիչ եւ նուազող (հովուական սրինգ), մեզ յաջողուեց երաժշտական հոգեւոր երգահանդէս կազմակերպել Փարիզի Հայոց եկեղեցում, որին տպաւորութիւնը ահազին եղաւ : Տարիներ յետոյ, համիդիպելով այդ Համագումարին ներկայ եղած մեծանուն Փրանսական եւ օտար երաժշտներին, բոլորը իփացմունենով ու զմայլանենով յիշում էին վարդապետի աննման զեղարուեստը :

Մ.Բ.

միայն հայկական երաժշտական մշակոյթի վերածնունդը Հայաստանի համար, այլեւ ևս ուղախանում եմ իրեւ արեւմուտքի՝ արեւելեան երաժշտութեան նոր գեղեցկութիւնները վայելելու, ինչ որ արդէն ստացած եմ Կոմիտասի օրինակելի հեղինակութիւնները ուսումնասիրելով։

Երաժշտանոցի գեղեցիկ ու մեծ գաղափարը իրազործելու համար նախ եւ առաջ նրա ծրագրողին պէտք է առողջութիւնը գարձնել։ Բայց վերջին լուրերի նրա զբութիւնը թէեւ շատ լուրջ, բայց անյոյս չէ \*): Հնարաւոր պիտի լինի նրան բժշկելու։ Այժմ նա գտնում է Փարիզում, իր մօտիկ բարեկամների շնորհիւ \*\*)։ Ինքնաճանաչութիւնը մեծ է։ Հոգեկան հիւանդութիւնները, որ առաջ են եկած անասելի ջղային ցնցումներից, բժշկում են ուրախութիւններով։ Որքան աւելի երջանկութիւն բերենք Հայր Կոմիտասին՝ սիրելով նրա երկը, նրա դործը, այնքան աւելի շուտ կը դարձնենք նրան առողջութիւնը։ Յուսանք որ նրա ոյժերի վերականգնումը երկար ժամանակի խնդիր չէ։ Յուսանք, որ նրա օպերան — առաջին հայկական օպերան «Անուշը» արեւմտեան օրինակելի մի բեմի վրայ մօտ ժամանակներս կը յայտնուի։ Նրա երկը, աւելի ուժեղ քան բոլոր դեւանագիտական ասպացոյցները, կը հաստատէ աշխարհի առջեւ հայ աղդի իրաւունքը իր մշակոյթի ինքնուրոյն պաշտպանութեան համար։

Խոնարհնք Կոմիտաս Վարդապետի անհուն անձնաւորութեան, նրա կեանքի, նրա մեծ դործի առաջ, հաւատանք նրա ամենախորունկ իշեածի իրազործմանը եւ բացադաշնենք. «Կեցցէ՛ Կոմիտաս Վարդապետը» : (1)

ԹՈՄԱՍ ՀԱՐՏՄԱՆ  
ԾՈՒՅԵՐԵՑԻց քարզմանեց  
ՄԱՐԴԱՐԻՏ ԲԱԲԱՅԵԱՆ

\* ) Այս դասախոսութիւնը գրուած է 1919 թվին։

\*\*) Յիշատակինք այստեղ իր աշակերտ

Գեորգ Գամլամանեանը որի բաջութիւնն ու անձնութիւնն կը մնան անմոռաց Կոմիտասի Եւրոպա թերուելու խնդրին մէջ։ Նա մեն մենակ իր վրայ առաւ այդ մեծ պատասխանատութիւնը եւ Կոմիտասին Փարիզ հասցրեց անասելի հոգեկան նեղութիւններ ու դժուարութիւններ կրելով՝ այդ 10 օրուայ նանապարհորդութեան ժամանակի։

Մ. Բ.

(1) Պ. Հարտմանի այս գեղեցիկ դասախոսութեան մէջ կը նկատենք քանի մը անձիշտ տեղեկութիւններ, զոր հարկաւոր կը նկատենք նշանակել։

Մեր մեծ երաժիշտը Անուշ օփերան ամբողջութեամբ չէ գրած, ինչպէս կը կարծէ Պ. Հարտման, շարադրած է միայն անոր մեներգոներէն մէկ քանին, որոնց ներդաշնակումն իսկ ատեն չէ ունեցած յօրինելու։ Այդ մեներգներու ձեռագիրը Կոմիտասեան Յանձնաժողովի մօտ է, եւ պիտի հրատարակուի։

Կոմիտաս Վարդապետ մեր հին ձեռագիրներու մէջ գտնուած եկեղեցական երգերու նօթագրութեան զաղտնիքը լուծելու աշխատած է տարիներով, բայց չենք կարծեր որ «Հին խաղերի բանալին գտած», այսինքն այդ կնճռոտ հարցին վերջնական լուծումը ձեռք ձգած ըլլար։ Իր ձեռագիրներուն մէջ գես չէ գտնուած ու եւ է լիակատար աշխատութիւն այս նիւթին վրայ, այլ կցկուուր նօթեր ու մասնական հետազոտութիւններ։

Ան նոյնպէս նիւթեր հաւաքած է «Հայ երաժշտութեան պատմութիւնը» զբելու համար, բայց ատեն չէ ունեցած զայն զբելու։ Այդպիսի «հեղինակութիւն» մը չենք պիտեր իրմէ մնացած։ Ինչ որ ունի զրած, «Հայ Շինական երաժշտութեան մասին» իր ուսումնասիրութիւնն է, որուն ձեռագիրը՝ ինչպէս եւ այս տողերը զրոյին ձեռքով կատարուած Փրանսերէն թարգմանութիւնը (որմէ զլուխ մը միայն հրատա-

բակուած է Մերքիւր Միւզիմալ հանդէսին մէջ), բարեբաղգարար գտնուեցան վերջերս Պ. Թոռը Աղատեանի ջանքերով եւ այժմ Կոմիտաս Վարդապետի ուրիշ զրութեանց հետ՝ Փարիզի Կոմիտաս Յանձնաժողովին մօտն են: Այդ ձեռագիր աշխատութիւնն ալ դժբաղդարար մնացած է այն անաւարտ վիճակին մէջ ուր Կոմիտաս զայն թողած էր 1906ին Փարիզ: Բայց այդ կիսկատար աշխատութիւնը մեծարժէր գործ մըն է եւ պէտք է հրատարակուի:

Այդ թանկագին աշխատութեան հետ, Կոմիտաս Յանձնաժողովը ստացաւ նաև՝ նորէն Պ. Աղատեանի չնորհիւ՝ հայ Երաժշտութեան մասին Կոմիտաս Վարդապետի 1914ին Փարիզի Երաժշտական Միջազգային Համագու-

մարին արտասանած երկու կարեւոր դասախոսութեանց (որոնց յիշատակութիւնը կ'ընէ Պ. Հարտման) Փրանսիկն թարգմանութեան ձեռագիրները: Կոմիտաս Յանձնաժողովը որոշած է այդ երեք աշխատութիւնները հատորի մը մէջ ամփոփել:

Գալով այն լաւատեսութեան զոր Պ. Հարտման կը յայտնէ մեր տարարադդ վարպետին բուժելիութեան մասին, մենք ամենքս ալ զայն ունէինք առաջին տարիներուն. բայց ամենէն հմուտ մասնագէտներու ժխտական վճիռները եւ երկար տարիներու ընթացքին իր մտաւոր վիճակին ու եւ է բարւոքման նշան ցոյց չտալը՝ դժբաղգարար այսօր մեզի թոյլ չեն տար այդ յոյսն այլեւս պահել: Ա. Զ.



## ՊԱՅՔԱՐ

Խղձերու անհուն ովկիանոսին  
Վիհերուն յանձնուած նաւակ մ'է հոգիս ...  
Զրկանի, անարգանի — քամիներ ցրտին —  
Ժամանակին հետ կը հարուածեն զիս :

Խաւարն անթափանց կ'իջնէ մերք չորս դին,  
Կ'առնէ ուղեցոյց աստղերն ու լուսին.  
Եւ խորհրդատու կ'ըլլան ինձ մէկէն՝  
Մահուան հեշտախոս վըհուկներն ամէն :

Բայց անոնի ինծի հին ծանօթներ են,  
Չեմ խարուիր իրենց մեղրաբառ լեզուէն.  
Վառած՝ հաւատքիս ջահերն անհամար,  
Յոյսերու կանչին կը նաւեմ յամառ :

Քամիներն անսանձ, թո՛ղ մտրակեն զիս ...  
Շղթայուած վագրի զայրոյք մը՝ հոգիս  
Կը բեղմնաւորէ ուժովն ամեհի  
Հսկայ փոթորկի մ'որ պիտի պայրի ...:

Մ. ՄԱՆՈՒՇԵԱՆ